




MARINA KARAPETYAN
ZAROUHI VARTAPETIAN
GAYANE HOVHANNISYAN
ARSHALUYS PETROSYAN

BUILDING ESP LISTENING SKILLS: POLITICAL LEADERSHIP

[YEREVAN STATE
UNIVERSITY]



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մ. Ռ. Կարապետյան, Զ. Հ. Վարդապետյան,
Գ. Վ. Հովհաննիսյան, Ա. Հ. Պետրոսյան

**ԶԱՐԳԱՅՐՈՒ ԼՍՈՂԱԿԱՆ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ ԵՎ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2017

YEREVAN STATE UNIVERSITY

**M. R. Karapetyan, Z. H. Vartapetian,
G. V. Hovhannisyan, A. H. Petrosyan**

**BUILDING ESP LISTENING SKILLS:
POLITICAL LEADERSHIP**

**YEREVAN
YEREVAN UNIVERSITY PRESS
2017**

ՀՏԴ 811.111:32.001(07)

ԳՄԴ 81.2Անգլ+66.0g7

Զ 352

*Հրապարակության է երաշխավորել ԵՊՀ ռոմանագերմանական
բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը*

Գիտական խմբագիր՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ե. Լ. Երզնկյան

Խմբագիրներ՝ Մ. Ռ. Կարապետյան, Զ. Հ. Վարդապետյան,
Գ. Վ. Հովհաննիսյան, Ա. Հ. Պետրոսյան

Գրախոսներ՝ Բ.Գ.Թ., դոցենտ Լ. Վ. Սարգսյան
Բ.Գ.Թ., դոցենտ Ի. Ս. Բուռնազյան
դասախոս Լ. Գ. Բոստանջյան
դասախոս Է. Գ. Ոսկանյան

Զ 352 Զարգացրու լսողական հմտություններ. քաղաքական
առաջնորդում և կառավարում: Ուսումնական ձեռնարկ./
Մ. Ռ. Կարապետյան, Զ. Հ. Վարդապետյան, Գ. Վ. Հով-
հաննիսյան, Ա. Հ. Պետրոսյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017.
– 106 էջ:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է բուհերի միջազ-
գային հարաբերությունների, քաղաքագիտության ֆակուլտետ-
ների ուսանողների և քաղաքական անգլերեն ուսումնասիրող
լայն շրջանակի համար:

ՀՏԴ 811.111:32.001(07)

ԳՄԴ 81.2Անգլ+66.0g7

ISBN 978-5-8084-2180-6

© ԵՊՀ հրատ., 2017

© Հեղ. խումբ., 2017

CONTENTS

Preface	6
UNIT 1. A Great President	8
UNIT 2. The Kennedys	14
UNIT 3. A War Hero	20
UNIT 4. To the White House	26
UNIT 5. The First Lady	32
UNIT 6. The Cold War	38
UNIT 7. Problems in Cuba	46
UNIT 8. Peace and War	52
UNIT 9. Equal Rights for All	60
UNIT 10. Race to the Moon	68
UNIT 11. The World in Shock	76
UNIT 12. The Years after	84
Essay Writing	90
Video Reporting	92
Quotations from John F. Kennedy	93
Glossary	96
References	104

ՆԱԽԱԲԱՆ

“Building ESP Listening Skills: Political Leadership” ուսումնական ձեռնարկը նպատակ ունի զարգացնել ուսանողների անգլերեն լեզվով լսելու և ընկալելու հմտությունները՝ միաժամանակ ծանոթացնելով ամերիկացի ականավոր քաղաքական գործիչ Ջոն Ֆիցջերալդ Քենեդիի կյանքին և գործունեությանը: Մատուցվող նյութը հենվում է էնն Քոլինզի “John F. Kennedy” գրքի ձայնագրության վրա: Ձեռնարկն ուղղված է նաև ընդհանուր և մասնագիտական բառապաշարի հարստացմանը, հայերենից անգլերեն թարգմանելու, տրամաբանելու, քննարկելու և բանավիճելու հմտությունների զարգացմանը:

Ձեռնարկը նախատեսված է 34-38 լսարանային ժամի համար (Common European Framework Level B1): Ձեռնարկի տասներկու գլուխներից յուրաքանչյուրը բաղկացած է հետևյալ մասերից՝ նախաունկնդրում (Getting Started), ունկնդրում (Listening Practice), բառապաշար (Vocabulary Practice), թարգմանություն (Translation Practice) և քննարկում (Discussion Practice): Առաջարկվող բազմապիսի վարժությունները նպատակ ունեն նպաստել անգլերեն լեզուն ուսումնասիրող ուսանողների բանավոր և գրավոր խոսքի զարգացմանն ու ամրապնդմանը: Ձեռնարկում ներկայացված են նաև թեմատիկ բառարան (Glossary) և ասույթներ Ջոն Քենեդիի ելույթներից (Quotations from John F. Kennedy): Տրված են թեմաներ ակնարկ գրելու (Essay Writing) և տեսանյութ պատրաստելու (Video Reporting) համար:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է բուհերի միջազգային հարաբերությունների, քաղաքագիտության ֆակուլտետների ուսանողների և քաղաքական անգլերեն ուսումնասիրող լայն շրջանակի համար:

Ձեռնարկը մշակվել է ԵՊՀ ուսմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոնի մի խումբ դասախոսների կողմից.

Մ. Կարապետյան (Units 1-3, 10-12, Essay Writing, Video Reporting, Glossary)

Զ. Վարդապետյան (Units 7-9, Preface, Quotations from John F. Kennedy)

Գ. Հովհաննիսյան (Units 1-12: Translation Practice B, Units 10-12: Translation Practice A, Video Reporting, Glossary)

Ա. Պետրոսյան (Units 1-3: Translation Practice A, Units 4-6)

**GETTING STARTED**

Do you think you know John F. Kennedy, what's real about him and what's myth? Do the quiz to find out.

1. John F. Kennedy was the _____ president of the USA.
 - a) 3rd
 - b) 25th
 - c) 35th
2. Kennedy was the first _____ to become the US president.
 - a) Roman Catholic
 - b) Protestant
 - c) Lutheran
3. Kennedy's full name was John _____ Kennedy.
 - a) Francis
 - b) Fitzgerald
 - c) Frederick
4. Kennedy died at the age of _____ .
 - a) 44
 - b) 46
 - c) 47
5. Kennedy was the first US president to win a _____ .
 - a) Pulitzer Prize
 - b) Nobel Peace Prize
 - c) Freedom Award

6. The film *JFK* was made by _____.
a) James Cameron
b) Quentin Tarantino
c) Oliver Stone
7. Mount Kennedy is in _____.
a) the Yellowstone National Park, USA
b) the Grand Canyon, USA
c) the Kluane National Park, Canada
8. People loved Kennedy because he _____.
a) was intelligent and charismatic
b) never failed
c) came from a rich family



LISTENING PRACTICE

A. Listening for main ideas

Listen to an introductory talk about JFK. Mark each of the statements as T (true), F (false) or NG (not given) in the talk. Correct the false statements.

1. _____ Kennedy's presidency didn't last long.
2. _____ Kennedy is among the most famous and admired American presidents.
3. _____ The book *Profiles in Courage* was Kennedy's autobiography.

A GREAT PRESIDENT

4. _____ Many buildings and public places are named after Kennedy.
5. _____ Kennedy didn't write his own speeches.

B. Listening for details

Listen to the talk again and take notes. Then answer the questions below.

1. When did Kennedy come to office?
2. Which other beloved presidents of the nation are mentioned in the recording?
3. How did the world react to Kennedy's assassination?
4. In what aspects was Kennedy 'the first' as president?
5. Which American president was younger than Kennedy when elected president?
6. Which important places are named after Kennedy?
7. Why did people love and admire Kennedy?



VOCABULARY PRACTICE

Fill in the missing words as they appear in the talk.

1. He was the first president to _____ a Pulitzer Prize, a special _____ from Columbia University.
2. The book was about eight US senators who showed political _____.

3. Important buildings and other places _____ his name.
4. Kennedy was good-looking and _____ , and he was also very good at _____ speeches.
5. If you listen to Kennedy's famous speeches today, you can easily understand why people _____ him.



TRANSLATION PRACTICE

A. Translate the following sentences into English.

1. Չնայած իր կարճատև պաշտոնավարությանը, Քենեդին հասցրեց դառնալ ամենասիրված նախագահներից մեկը:
2. Քենեդին առաջարկեց առողջապահությանը և քվեարկելու իրավունքին վերաբերող դաշնային ծրագրեր, որոնք չիրականացան իր կյանքի օրոք:
3. Քենեդիի մասին ֆիլմեր դիտելիս զգում ես նրա ներկայությունը և համոզվում նրա ճարտասանական վարպետության մեջ:
4. Քենեդիի հաջողությունը հաճախ վերագրում են նրա արտաքին գրավչությանը, բայց նա իսկապես շնորհաշատ և կիրթ մարդ էր:
5. Մարդիկ մինչև հիմա այցելում են այն վայրը, որտեղ կրակել են Քենեդիի վրա:

B. Render the following texts in English. Use the glossary on p. 96.

ԱՄՆ-ի առաջին կաթոլիկ նախագահը

Կուսակցության առաջնորդներից շատերը կարծում էին, որ Քենեդին չափազանց երիտասարդ և անփորձ էր նախագահ դառնալու համար: Շատերը նաև կասկածում էին, որ կաթոլիկ հավատք դավանող մեկը կարողանար համազգային ընտրություններում հասնել հաղթանակի մի երկրում, որտեղ ժողովրդի մեծամասնությունը բողոքական էր:

Իրենց հերթին շատ բողոքականներ վախենում էին, որ լինելով կաթոլիկ, Քենեդին հնարավոր է ենթարկվեր Պապի՝ Հռոմի կաթոլիկ եկեղեցու առաջնորդի հրամաններին: Իր ելույթում Քենեդին ասաց, «Ես հավատում եմ Ամերիկային, որտեղ եկեղեցու և պետության տարանջատումը բացարձակ է, ... որտեղ ոչ մի հանրային պաշտոնյա չի հայցում կամ ընդունում հանրային քաղաքականությանն առնչվող հրահանգներ որևէ եկեղեցական աղբյուրից»:

«Քաջության տիպարները»

Հիվանդանոցում ապաքինվելիս Քենեդին գրեց «Քաջության տիպարները» գիրքը՝ ակնարկների ժողովածու ամերիկյան քաղաքական գործիչների մասին, որոնք վտանգում էին իրենց կարիերան՝ պայքարելով արդար, բայց ոչ դյուրին գործի համար:

Գիրքն արժանացավ Պուլիցերյան մրցանակի 1957 թ.-ին: Մարդկանց հիացրեց հեղինակի գրական տաղանդը և Ամերիկայի պատմության կարևոր հարցերի՝ նրա խոր ըմբռնումը:



DISCUSSION PRACTICE

1. Do you personally think highly of John F. Kennedy? Give reasons for your answer.
2. Do you think a country's leader should be charming or efficient? What is his / her role as a leader? What are his / her responsibilities before the country and the people?
3. If you met Kennedy, what would you ask him?
4. What other statesmen do you admire?



GETTING STARTED

You're going to listen to a talk about the Kennedy family.

Tick (✓) the topics that you think will be discussed.

1. _____ John Kennedy's great-grandfather
2. _____ The potato famine in Ireland
3. _____ How John's parents met and got married
4. _____ The employment history of John's father, Joseph Kennedy
5. _____ John Kennedy's wife and children
6. _____ The number of children in Kennedy's nuclear family
7. _____ The fate of each of the children in the family
8. _____ Some details of Kennedy's upbringing and childhood
9. _____ Characteristics of his oldest brother
10. _____ The family ties with important politicians and business people
11. _____ John's school and university years
12. _____ John's success as an orator at school
13. _____ Joseph Kennedy's work as an ambassador
14. _____ The start of the fascist movement
15. _____ John's emerging interest in military activity



LISTENING PRACTICE

A. Listening for main ideas

Listen to a talk about the Kennedys. Mark each of the statements as T (true), F (false) or NG (not given) in the talk. Correct the false statements.

1. _____ In the late 1840s, the Irish lived a prosperous life in their own country.
2. _____ The Kennedys became a rich and influential political family.
3. _____ Joseph had high expectations about his children.
4. _____ Jack had gambling problems.
5. _____ Jack's father served as ambassador to the UK.

B. Listening for details

Listen to the talk again and take notes. Then answer the questions below.

1. When and why did Jack's ancestor Patrick Kennedy immigrate to the US?
2. How did Patrick make his fortune?
3. Who did Patrick's grandson Joseph marry? What family did the woman come from?

4. How many children did Joseph and Rose have?
5. How many homes did the Kennedys have?
6. How did Joseph bring up his children? Which of them did he have the greatest hopes for?
7. Which of his three brothers did Jack look up to?
8. Can you describe Joe Kennedy Jr. (Junior)?
9. How was Jack different from his older brother?
10. Where did Joe Jr. and Jack attend school?
11. Under which president was Jack's father appointed ambassador to the UK?
12. What were Joe Kennedy's responsibilities as the US ambassador?
13. What was the situation in Europe in the late 1930s?
14. How did his father's job influence Jack's interests?



VOCABULARY PRACTICE

Fill in the missing words as they appear in the talk.

1. The Kennedys were rich, so their life was very _____.
2. The children spent happy times swimming, _____, and playing sports.
3. Joe Kennedy Sr. (Senior) wanted his children to win at everything, and he _____ them to do their best.
4. Kennedy _____ his back playing football, and he had problems because of other _____.

5. After leaving Choate, Jack _____ Joe to Harvard University.
6. President Franklin D. Roosevelt sent Joe Kennedy Sr. to the UK as _____ for the US.
7. Hitler and Mussolini had _____ ideas; they planned to _____ other countries in Europe.
8. As US ambassador to London, Joe Kennedy Sr. had to _____ what was happening in the UK and Europe.



TRANSLATION PRACTICE

A. Translate the following sentences into English.

1. Քիչ ընտանիքներ կան, որոնք տվել են քաղաքական գործիչների մի քանի սերունդ:
2. Իռլանդացի նորեկների սերնդի ներկայացուցիչներից Ջոն Ֆիցջերալդն ու Պատրիկ Քենեդին ամերիկյան նշանավոր քաղաքական դինաստիայի սկիզբ դրեցին:
3. 20-րդ դարի սկզբին Բոստոնում քաղաքային իշխանության կազմում աննախադեպ փոփոխություններ էին տեղի ունենում. իռլանդացի ներգաղթյալներին հաջողվում էր ընտրվել կարևոր հանրային պաշտոններում:
4. Ավագ Ջո Քենեդին վստահվեց Միացյալ Թագավորությունում ԱՄՆ-ի դեսպանի պատվաբեր պաշտոնը:
5. Քենեդիների ընտանիքի մի քանի անդամներ մինչ այժմ ծառայում են ԱՄՆ սենատում և պաշտոնավարում այլ պետական կառույցներում:

B. Render the following text in English. Use the glossary on pp. 96-97.

Ջոզեֆ Պատրիկ Քենեդին հայտնի է որպես քաղաքական գործիչների գերդաստանի հայր: Նա երկաթե կամք ունեցող մարդ էր, որն իր ուղին հարթեց դեպի հարստություն և իշխանություն և ստիպեց իր զավակներին հասնել հաջողության ամեն գնով: «Մենք չենք ուզում ունենալ պարտվողներ: Այս ընտանիքում մենք ուզում ենք հաղթողներ»: Ջոզեֆ Պ. Քենեդին 25 տարեկանում արդեն բանկի նախագահ էր: 30 տարեկանում նա միլիոնատեր էր: Նա ներդրումներ ուներ կինոյի բիզնեսում և ոգելից խմիչքների առաքման գործում: Նա իր ինը զավակներից յուրաքանչյուրին տվեց մեկ միլիոն դոլար: Նա հայտնի դարձավ որպես Դեմոկրատական կուսակցության մեծ հովանավոր: 1932 թ.-ի նախագահական ընտրություններում Ջոզեֆ Պ. Քենեդին աջակցեց Ֆրանկլին Դ. Ռուզվելտին, որն իր հերթին նրան նշանակեց ԱՄՆ արժեթղթերի և փոխանակման կոմիտեի նախագահ: Կարճ ժամանակ անց Ջոզեֆ Քենեդին նշանակվեց ԱՄՆ ծովային առևտրի կոմիտեի նախագահ: 1937 թ.-ին նա դարձավ առաջին իռլանդացի ամերիկացին, ով պիտի ծառայեր Բրիտանիայում որպես ԱՄՆ դեսպան: Նա ծառայեց երեք տարի և հրաժարական տվեց 1940 թ.-ին՝ համոզված, որ նացիստական Գերմանիան կգրավի Բրիտանիան, և որ այդ բախումից հեռու մնալը Ամերիկայի միակ հույսն էր: Երկրորդ աշխարհամարտի նախօրեին Անգլիայից վերադառնալուն պես Քենեդին գրեց. «Անգլիայում ժողովրդավարությունն ավարտվեց: Հնարավոր է այն լինի այստեղ»:

Քենեդիի վիճահարույց տեսակետները նրան բերեցին Հիտլերի հետ փոխզիջման գնացողի համբավ: ԱՄՆ-ի պահվածքը Չերչիլը համարեց խուսափողական, ասելով՝ «Փոխզիջման գնացողը նա է, ով կարծում է, թե կոկորդիլոսը իրեն կպահի ընթրիքի համար»:



DISCUSSION PRACTICE

1. Why do people leave their homes and immigrate to other countries?
2. Do you think working hard is enough to become rich and successful?
3. What relationships do you think Jack had with his older brother?
4. Why was the family excited when the father was appointed ambassador?

**GETTING STARTED**

You're going to listen to a talk about how John F. Kennedy became a war hero. Before you listen, tick (✓) the statements that you think are true.

1. _____ World War II began when the German army attacked Russia.
2. _____ Jack and his older brother were both pilots.
3. _____ In WW2 the Americans and Japanese were enemies.
4. _____ The fights between the Japanese and the Americans took place on the islands near Papua New Guinea.
5. _____ The American patrol boats used torpedoes against the Japanese ships.
6. _____ The Japanese ship crashed into the American boat, where Jack was the leader.
7. _____ Many of the navy officers were injured, including Jack.
8. _____ They were rescued by an American plane.
9. _____ Jack pulled an injured soldier on his back.
10. _____ Jack thought of himself as a great hero.



LISTENING PRACTICE

A. Listening for main ideas

Listen to a talk about John Kennedy's heroism. Number the events in the order they are discussed.

- _____ The American crew reached a small island.
- _____ World War II broke out.
- _____ Jack received an award from the US government.
- _____ Jack became a navy officer.
- _____ Jack's boat sank.

B. Listening for details

Listen to the talk again and take notes. Then answer the questions below.

1. When did the US enter the Second World War?
2. Where was Jack appointed as leader?
3. Who did the American patrol boats fight against?
4. Why couldn't the *PT109* prevent the collision?
5. What injury did Jack suffer?
6. How did most of the crew manage to survive?
7. Where did they get some help?
8. What did Jack answer when asked how he had become a war hero?
9. What happened to Jack's older brother?

**VOCABULARY PRACTICE**

Fill in the missing words as they appear in the talk.

1. On 1 September 1939, the German army _____ Poland, and World War II began.
2. Jack's older brother was in the navy, _____ war planes in Europe.
3. After Jack finished training as a _____ officer, he was sent to the South Pacific as leader of a patrol _____ boat, the *PT-109*.
4. There was often _____ fighting between American and Japanese ships.
5. The food and other things the Japanese _____ needed came to the islands on Japanese _____.
6. Jack was holding the _____ of the boat, and he turned it quickly, trying to _____ the *PT-109* out of the *Amagiri's* way.
7. The American _____ boats were to stop the Japanese warships.
8. The *Amagiri* _____ into the *PT-109* and cut it into two _____.
9. Some officers had terrible _____ on their faces and bodies.
10. Jack asked his men, "Do you want to fight, or _____ to the Japanese?"

11. Jack and his men swam to a large island, where a few days later, some _____ found them.
12. After Jack arrived back in the US, he became a war _____.



TRANSLATION PRACTICE

A. Translate the following sentences into English.

1. Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ամերիկյան ռազմանավերը մասնակցում էին մարտական գործողություններին հիմնականում ընդդեմ ճապոնական զորքերի:
2. Պատերազմից հետո ամերիկյան կառավարությունը մեծ պատիվների արժանացրեց իր զինվորներին, այդ թվում՝ ապագա նախագահ Ջոն Քենեդիին:
3. Բազմաթիվ ամերիկյան ռեժիսորներ իրենց ֆիլմերում անդրադարձել են Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ամերիկայի և Ճապոնիայի զինվորների բախումներին, իսկ երբեմն էլ՝ մարդկային հարաբերություններին:
4. Երբ մարդիկ հայտնվում են ծայրահեղ դժվար իրավիճակներում, ավելի ցայտուն են դրսևորվում նրանց բնավորության լավ կամ վատ գծերը:
5. Քենեդիների ընտանիքը Երկրորդ աշխարհամարտին տվեց երկու զինվոր, որոնցից մեկը դժբախտաբար զոհվեց:

B. Render the following text in English. Use the glossary on p. 97.

Ջոն Քենեդիին վաղուց էր հետաքրքրում քաղաքական արիության թեման: Դեռևս Հարվարդում ուսանելիս նա գրեց աշխատություն, որը հետագայում տպագրվեց «Ինչու էր Անգլիան քնած» վերնագրով: Այնտեղ նա դիտարկում էր այն փաստը, որ 1930-ականներին բրիտանացի քաղաքական առաջնորդները տեղի տալով ժողովրդի դիմադրությանը՝ չէին վերազինել երկիրը, որը Երկրորդ աշխարհամարտի նախօրեին թույլ էր և պատերազմին անպատրաստ: Հետագայում նա զարգացրեց քաղաքական արիության թեման իր «Քաջության տիպարները» գրքում:

**Հայտնի ասույթներ Ջ. Քենեդիի
«Քաջության տիպարները» գրքից**

«Չնսեմացնելով զոհվածների քաջությունը՝ չմոռանանք նաև արիաբար փրկվածներին»:

«Մարդն անում է այն, ինչ պիտի անի, չնայած հետևանքներին, խոչընդոտներին, վտանգներին և ճնշումներին իր անձի հանդեպ, և սա է ողջ մարդկային բարոյականության հիմքը»:



DISCUSSION PRACTICE

1. What does the word 'hero' mean to you?
2. Do you think Kennedy deserved an award for courage?
3. Might it be a better choice to surrender to the Japanese than to swim 5 km pulling the injured men? Give reasons for your answer.

**GETTING STARTED**

What do you know about the American political system and Kennedy's road to the White House? Do the quiz to find out.

1. Right after WW2 John Kennedy worked as a _____.
 - a) commander-in-chief
 - b) journalist
 - c) Congressman
2. The US government consists of these branches: _____.
 - a) executive, legislative, judicial
 - b) the House of Representatives and the Senate
 - c) the Parliament and the Supreme Court
3. The President of the US is the head of _____.
 - a) the country and Congress
 - b) the Senate
 - c) the country and the army
4. The country has _____ major political parties.
 - a) two
 - b) three
 - c) four
5. Kennedy succeeded _____ as president.
 - a) Richard Nixon
 - b) Dwight D. Eisenhower
 - c) his older brother Joe Kennedy

6. Kennedy was chosen for the House of Representatives as a _____ candidate.
 - a) Republican
 - b) Labourite
 - c) Democratic
7. Kennedy's contender for presidency _____.
 - a) represented Democratic Party
 - b) had served as vice president
 - c) felt very confident in front of the TV cameras
8. John Kennedy was elected president in _____.
 - a) January 1960
 - b) November 1960
 - c) January 1961



LISTENING PRACTICE

A. Listening for main ideas

**Listen to a talk about John Kennedy's road to presidency.
Number the ideas in the order they are discussed.**

- _____ Kennedy became a senator.
- _____ Kennedy had a TV debate with Nixon.
- _____ Jack covered important national and international events as part of his job.
- _____ Kennedy started his work as a Congressman.
- _____ Kennedy travelled throughout the US giving speeches.

B. Listening for details

Listen to the talk again and take notes. Then answer the questions below.

1. What did Jack write about as a newsman?
2. What are the US president's responsibilities?
3. What's the job of Congress?
4. What does the judicial branch do?
5. What post-war policy did the Republican Party follow?
6. How did the views of the Democrats differ from those of the Republicans?
7. How long had Jack served in Congress before he became a senator?
8. Why were people interested in Senator Kennedy?
9. Where did Jack get the money for his presidential campaign?
10. What played an essential role in Kennedy's victory in the election?
11. What was the new president's inauguration speech about?



VOCABULARY PRACTICE

There is a missing word in each of the sentences below. Insert the word in the right place as it was used in the talk.

1. After his son's death Joe Kennedy Senior ... his hopes to Jack. _____
2. The American government is composed of the President, Congress and the Court. _____
3. The House of and the Senate create laws. _____
4. The Republican Party thought people should help. _____
5. The presidential from the Democratic Party was Jack. _____
6. People thought highly of John Kennedy as he was a war. _____
7. During the presidential run Jack needed to get many to win against his challenger. _____
8. In the US, the vice president control in case of the president's incapacity. _____

**TRANSLATION PRACTICE**

Translate the following sentences into English.

1. ԱՄՆ-ում պետական կառավարումը բավականին արդյունավետ կերպով բաշխված է երեք հավասարազոր թևերի՝ նախագահի, կոնգրեսի և գերագույն դատարանի միջև:
2. Քաղաքական գործիչներից շատերը իրենց աշխատանքային գործունեությունը սկսել են որպես հանրային ծառայողներ, ինչը նրանց հնարավորություն է տվել անձամբ առնչվել մարդկանց խնդիրներին ու հոգսերին:
3. Կուսակցական պատկանելությունը երկրորդական է դառնում այն դեպքում, երբ մարդիկ անվերապահորեն վստահում են որևէ անհատի, որին ցանկանում են տեսնել երկրի ղեկավարի պաշտոնում:
4. Որքան ավելի լավ ճանաչի հանրությունը քաղաքական գործչին, այնքան մեծ կլինի ընտրությունների ժամանակ մարդկանց մասնակցության ցուցանիշը:
5. Նորընտիր Քենեդիի հայտնի ելույթի հայտնի կոչը մարդկանց մեջ քաղաքացիական մտածողություն և երկրի հանդեպ պատասխանատվություն ձևավորելու խթան էր:



DISCUSSION PRACTICE

1. Jack's father had great expectations for his children's future and urged them to do their best. What role did Joseph Kennedy, Sr. play in JFK's career?
2. Do you think parents should influence their children's choice of future profession? Can they dictate what career their children should embark on? Why/Why not?
3. What makes the road to presidency especially rough? What qualities should a candidate possess? Would you like to be the president of your country?
4. Would you vote for Kennedy or Nixon if you had a chance? Do you think charm is more important than professionalism? What qualities of both candidates do you think are worth admiring?
5. In what ways was Kennedy's inauguration speech inspiring?

**GETTING STARTED**

Do you think you know about Kennedy's wife and family? Do the quiz to find out.

1. Kennedy met Jackie _____.
 - a) at a dinner party
 - b) at the editorial office
 - c) during high-level talks
2. Jackie's family immigrated to the US from _____.
 - a) Russia
 - b) Italy
 - c) France
3. When they met, Jackie worked as a _____.
 - a) school teacher
 - b) model and actress
 - c) newspaper correspondent
4. The married couple _____.
 - a) faced some serious difficulties
 - b) often quarrelled
 - c) had only one child
5. When the couple moved into the White House, Jackie _____.
 - a) had some new rooms built
 - b) decorated the house with works of art
 - c) banned the access to the house for Americans

6. Jackie made one of the rooms into _____.
a) a ballroom
b) a small school
c) photo workshop



LISTENING PRACTICE

A. Listening for main ideas

Listen to a talk about Jacqueline Kennedy. Then choose the best paraphrase for each of the ideas from the talk.

1. a) Jackie had a French family.
b) Jackie's family used to live in France.
2. a) Jackie tried to be a good housewife.
b) Jackie tried hard both for the best of her country and her children.
3. a) Kennedy and his wife didn't look like the President and the First Lady but resembled movie stars.
b) Kennedy and his wife were good-looking and often posed for newspapers and magazines.
4. a) Kennedy and Jackie were unhappy.
b) Not everything went off smoothly in the couple's life.



VOCABULARY PRACTICE

Complete the summary with the right words as they appear in the talk.

Kennedy married Jackie when he was a _____. Her family came from France and worked hard to prosper in _____. At the time she met Kennedy, Jackie worked as a photo correspondent with a _____. Jackie was communicative and _____; hence, she fascinated people. They also _____ the way she dressed. Jackie often _____ to other countries with her husband and met _____ of government.

The First Lady made the White House look more _____. She added pictures and other things from all _____ America. She also made the President's house a _____ home, where her two kids could live happily.



TRANSLATION PRACTICE

A. Translate the following sentences into English.

- Ֆրանսերենի դասերին զուգահեռ պատանի ժակլինը դասական բալետի դասերի էր հաճախում Մետրոպոլիտեն օպերայում:

2. Հետաքրքիր է, որ երիտասարդ տարիքում «Վաշինգտոն Թայմզ Հերալդ»-ում աշխատելիս ժակլինը հարցազրույց է անցկացրել Ռիչարդ Նիքսոնի հետ:
3. Ժակլին Քենեդին խորապես գիտակցում էր երկրի հանդեպ իր պատասխանատվությունը: Այնուհանդերձ, նրա համար առաջնահերթ կարևորություն ուներ լավ կին և երեխաների համար լավ մայր լինելը:
4. Որպես առաջին տիկին Ժակլին Քենեդին երիտասարդության շունչ և թարմություն բերեց Սպիտակ տուն, որտեղ մշտապես հյուրընկալվում էին արվեստի մարդիկ:
5. Օգտագործելով մի քանի օտար լեզուներով խոսելու իր կարողությունը՝ տիկին Քենեդին տարբեր երկրներում հանդես էր գալիս որպես բարի կամքի դեսպան:

B. Render the following text in English. Use the glossary on p. 97.

Մեր ժամանակներում ոչ մի նախագահի ընտանիք չի արժանացել ավելի մեծ հանրային ուշադրության, քան Քենեդիները: Ժակլին Քենեդիի նրբագեղությունը որպես առաջին տիկին և Ջոն Քենեդիի գրավիչ արտաքինն ու հմայքը Քենեդիներին և նրանց երկու զավակներին գրեթե արքայական ընտանիքի վերածեցին: Մարդիկ այնքա՜ն սիրահարված էին այս երիտասարդ ընտանիքին: Ժակլինի ժողովրդականությունն այնքան մեծ էր, որ նրա ամուսինը հումորով նկատել էր, «Ֆրանսիա կատարած պաշտոնական այցի ժամանակ, ես էի ուղեկցում Ժակլին Քենեդիին Փարիզ և ոչ թե նա՝ ինձ»:

1963 թ.-ին Քենեդիի սպանությունից հետո ժակլինը հարցազրույց տվեց լրագրող Թեոդոր Ուայթին, որը նկարագրեց Քենեդիների ընտանիքն ու վարչակազմը որպես «կամելոտ»: «Կամելոտ» հասկացությունը հաճախ օգտագործվել է որպես մշակույթի, լուսավորության և ապագայի խորհրդանիշ: Ըստ ժամանակակից ընկալման՝ «կամելոտ» գաղափարը արթնացնում է փառքի, բարոյականության և արդարության զգացում:



DISCUSSION PRACTICE

1. Do you think a wife should help her husband in his work?
Why/Why not?
2. In your opinion, what should be the First Lady's duties?
What personal qualities should she have?

**GETTING STARTED**

Do you think you know about the Cold War? Tick (✓) the possible causes of that war.

1. ____ The US and the USSR competed for the status of the world's dominant power.
2. ____ The US and the USSR had conflicting political systems.
3. ____ Neither side wanted an open war.
4. ____ The USSR wanted a secure western border.
5. ____ After WW2 the former allies turned into enemies.
6. ____ The USA had a small army as compared with the Soviet Army.
7. ____ Soviet leaders felt personal animosity toward the American way of life.
8. ____ Americans feared a communist attack.
9. ____ The USSR controlled part of Germany, including Berlin.
10. ____ The USA enticed qualified Soviet specialists.
11. ____ The Soviets erected a wall around West Berlin.
12. ____ The USSR spread its influence and views in Eastern Europe.
13. ____ The USA wanted to protect the people of East Berlin.



LISTENING PRACTICE

A. Listening for main ideas

Listen to a talk about the Cold War between the two superpowers and answer the questions.

1. What was one of the most complicated issues during Kennedy's presidency?
2. What were the political regimes in the USA and the USSR?
3. What does the term 'Cold War' mean?
4. What happened to Germany after WW2?

Discuss the causes and consequences of Khrushchev-Kennedy confrontation over the Berlin issue.

1. Why did Kennedy initiate talks with Khrushchev in June 1961?
2. What did the Soviets do after the talks? What was the purpose of taking that measure?
3. How did the citizens of East Berlin react to the new situation?
4. What did Kennedy do in response?

B. Listening for details

Listen to the talk again and make notes under the following headings.

The United States	The Soviet Union

**VOCABULARY PRACTICE**

Fill in the blanks with the words below making the necessary changes.

protect, weapon, escape, relationship, government, fighting, nuclear, talks, worriedly, gun

1. The Berlin Wall didn't prevent the citizens of East Berlin from _____ to West Berlin.
2. The American President was sure that the Soviet way of _____ was inefficient.
3. Kennedy didn't know what Khrushchev was planning and he thought _____ that the USSR might attack West Berlin.
4. The USSR was one of the major _____ powers.
5. Kennedy couldn't _____ citizens of East Berlin as the US only had control of West Berlin.
6. The _____ were intended to discuss the problem of Berlin.
7. The Cold War didn't involve open _____ although the two sides were mortal enemies.
8. The Soviet soldiers armed with _____ guarded near the Wall to prevent people from leaving East Berlin.
9. There were a lot of circumstances that destroyed the _____ between the USSR and the USA.
10. Both countries were politically strong and produced nuclear _____.

**TRANSLATION PRACTICE****A. Translate the following sentences into English.**

1. Դեռևս երիտասարդ տարիքից Ջեքը հետաքրքրված էր պատերազմի և խաղաղության հարցերով:
2. Իր երդմնակալության ուղերձում Քենեդին Սառը պատերազմի վերաբերյալ իր դիրքորոշումը ձևակերպեց հետևյալ կերպ. «Եկե՛ք երբեք չբանակցենք վախից դրդված, բայց և երբեք չվախենանք բանակցելուց»:
3. Կուբայի ճգնաժամի օրերին Քենեդին ի հայտ բերեց առաջնորդի իր տաղանդը, որոշումներ կայացնելու ունակությունները և ճգնաժամը կառավարելու իր հմտությունները:
4. Քենեդին Բեռլինը համարում էր Արևմուտքի խիզախության և կամքի փորձաքարը (testing field):
5. 1949 թ.-ին ԱՄՆ միացավ Հյուսիսատլանտյան դաշինքին (ՆԱՏՕ), որն առաջին ռազմական դաշինքն էր Ամերիկայի պատմության մեջ:

B. Render the following texts in English. Use the glossary on pp. 97-98.**ՆԱՏՕ-ի և Վարշավայի պայմանագրի ստեղծումը**

«Սառը պատերազմ» եզրույթը տարածում գտավ, երբ 1947 թ. ամերիկյան լրագրող Վալտեր Լիպմանը առաջին անգամ այդ եզրույթն օգտագործեց իր համանուն գրքում:

Օգտագործելով այն Լիպմանը նկատի ունեն, որ ԱՄՆ և ԽՍՀՄ հարաբերությունները վատթարացել էին և հասել պատերազմի եզրին, թեպետ առանց իրական պատերազմական գործողությունների:

Սառը պատերազմի արդյունքում ստեղծվեցին երկու լայնամասշտաբ ռազմական դաշինքներ: 1947 թ. արևմտյան տերությունների կողմից ստեղծվեց ՆԱՏՕ-ն: 1955 թ. Արևմտյան Գերմանիան ճանաչվեց որպես անկախ պետություն: Նրան թույլ տրվեց վերագինվել և միանալ ՆԱՏՕ-ին: Ի պատասխան այս զարգացումներին, 1955 թ. ԽՍՀՄ-ի գլխավորությամբ կնքվեց Վարշավայի պայմանագիրը:

«Սառը պատերազմ» եզրույթն օգտագործվում էր ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի ու նրանց դաշնակիցների միջև երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած պայքարը նկարագրելու համար: Սառը պատերազմը տևեց 1940-ից մինչև 1980-ականների վերջը: Այս ժամանակահատվածում միջազգային քաղաքականությունը գլխավորապես ձևավորվում էր այս երկու ուժային բլոկների միջև թշնամության և նրանց գաղափարախոսության ազդեցության ներքո, այն է՝ ժողովրդավարություն և կապիտալիզմ՝ ԱՄՆ-ի և իր դաշնակիցների դեպքում և կոմունիզմ՝ Խորհրդային բլոկի դեպքում: ԱՄՆ-ի գլխավոր դաշնակիցներն էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Արևմտյան Գերմանիան, Ճապոնիան և Կանադան: Խորհրդային բլոկում էին Կուբան, Չինաստանը և Արևելյան Եվրոպայի շատ երկրներ՝ Բուլղարիան, Չեխոսլովակիան, Հունգարիան, Լեհաստանը, Արևելյան Գերմանիան, Ռումինիան:

Երկրները, որոնք որևէ բլոկի հանդեպ պաշտոնական պարտավորվածություն չունեին, հայտնի էին որպես չեզոք՝ երրորդ աշխարհի, ոչ դաշնակից պետություններ: 1961 թ. սեպտեմբերին Բելգրադում (Հարավսլավիա) կայացած համաժողովում 25 պետությունների ղեկավարների նախաձեռնությամբ հիմնադրվեց Չմիանալու շարժումը (Non-aligned Movement – NAM): Նրանք այն երկրների ղեկավարներն էին, որոնք վերջերս էին ազատագրվել օտար լծից և մերժում էին նորացված կապերը որևէ մեծ տերության հետ: Նրանց շարքում առավել ազդեցիկ էին Հնդկաստանի վարչապետ Զավահարլալ Ներուն, Ինդոնեզիայի նախագահ Սուկարնոն, Եգիպտոսի նախագահ Նասերը, Գանայի և Գվինեայի նախագահները և Հարավսլավիայի նախագահ Իոսիֆ Բրոզ Տիտոն: Խմբի անդամների թիվը հետագայում աճեց մինչև 110-ի՝ ընդգրկելով Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի շատ երկրներ: Չմիանալու շարժման համաժողովներն անցկացվում էին երեք տարին մեկ: Հյուրընկալող երկրի ղեկավարը ստանձնում է համաժողովի նախագահությունը: Չմիանալու շարժման հիմնադիր անդամներն իրենց համարում էին կարևոր բուֆեր թշնամական ռազմական դաշինքների միջև, որն ի գորու է կանխել հնարավոր առճակատումները: Լավագույն օրինակ էր Վիետնամի պատերազմի ժամանակ նրանց մեծամասնության ընդդիմացումն ԱՄՆ-ին, իսկ 1979 թ. նրանց ընդդիմացումը ԽՍՀՄ-ի՝ Աֆղանստան ներխուժելու քայլերին: Գործնականում այս պետությունների ղեկավարները անվերապահորեն հարում էին ուժային բլոկներից որևէ մեկին:



DISCUSSION PRACTICE

1. In your opinion, was the Cold War inevitable? Which country was more to blame?
2. Why do you think Americans were so terrified of Communist intervention after World War II?
3. How do you think this fear affected American and Soviet cultures in the 1950s and early 1960s?
4. What technological achievements can be attributed to the rivalry in the Cold War?



GETTING STARTED

You're going to listen to a talk about problems in Cuba. Before you listen, tick (✓) the statements that you think are true.

1. _____ A big problem for the US was Cuba.
2. _____ John Kennedy wanted to come to agreement with the leader of Cuba, Fidel Castro.
3. _____ F. Castro's army was strong and could attack the US.
4. _____ Cubans living in the US approved of Castro's policy.
5. _____ Kennedy decided to use Eisenhower's plan to attack Cuba.
6. _____ The war between the US and Cuba lasted a week.
7. _____ Cuban and Soviet leaders had friendly relationships.
8. _____ Kennedy was planning to attack both Cuba and the USSR.
9. _____ The Soviet people criticised the American government.
10. _____ The election campaign of Kennedy's party, the Democrats, was unsuccessful.



LISTENING PRACTICE

A. Listening for main ideas

Listen to a talk about problems in Cuba and answer the questions.

1. Why was Cuba a big problem for the US government?
2. What was President Eisenhower's plan against Cuba?
3. What events happened in the Bay of Pigs?
4. How was the USSR under Khrushchev planning to strengthen its military base in the Caribbean Basin?
5. What did Khrushchev do to prevent the outbreak of a nuclear war?

B. Listening for details

Listen to the talk again and take notes. Then answer the questions below.

1. What regime existed in Cuba in 1961? Who was the country's leader?
2. What did military advisors persuade Kennedy to do about Cuba?
3. How was the plan implemented?
4. What was the important lesson that Kennedy learned from the events of the Bay of Pigs?

5. Why did the USSR want to build nuclear missile sites in Cuba?
6. What measures did Kennedy take to control the situation?
7. What did the Soviet leader Khrushchev write in his first letter addressed to Kennedy?
8. What did Khrushchev write in his second letter to Kennedy?
9. How did Kennedy respond to the letters?
10. What did the Soviet leader learn about the new US president?



VOCABULARY PRACTICE

Fill in the blanks with the correct form of the word **advise**.

1. He is a special _____ to the President on education and science.
2. We hired two experts _____ on new technology.
3. It is strongly _____ that you take out insurance.
4. He works part-time in an _____ committee.
5. I'd _____ buying your tickets in advance if you want to travel in August.
6. The president drew up a plan with his military _____.

7. They _____ the government on environmental issues.
8. The students asked their lecturer for _____ on how to prepare for the exam.
9. Your lawyer can _____ you whether to take any action.
10. Let me give you a piece of _____ on how to avoid mistreatment.



TRANSLATION PRACTICE

A. Translate the following sentences into English.

1. ԱՄՆ-ի ազգային շահից ելնելով՝ Քենեդին համաձայնեց հետևել իր ռազմական խորհրդատուների և ԿՀՎ-ի (CIA) ծրագրին:
2. Երկու գերտերությունների առաջնորդները եկան համաձայնության՝ միջուկային պատերազմի բռնկումը կանխելու համար:
3. ԽՍՀՄ առաջնորդը խոստացավ հեռացնել միջուկային հրթիռները Կուբայից այն պայմանով, որ ԱՄՆ երբեք չհարձակվեր Կուբայի վրա:
4. ԱՄՆ-ի հազարից ավելի կուբացի վտարանդի զինվորներ հանձնվեցին Կուբայի բանակին:
5. Որոշ եվրոպական երկրներում հանրահավաքներ անցկացվեցին ընդդեմ ԱՄՆ-ի՝ Կուբայի և ԽՍՀՄ-ի վրա նրա հնարավոր հարձակումը կանխելու նպատակով:

B. Render the following text in English. Use the glossary on pp. 98-99.

1961 թ. ԱՄՆ անհաջող փորձ արեց տապալելու Կուբայի վարչապետ Ֆիդել Կաստրոյի կառավարությունը կուբացի վտարանդիների օգնությամբ, որոնց աջակցում էր ԱՄՆ-ը: Ներխուժման ծրագրին հավանություն էր տվել Քենեդին՝ Էյզենհաուերի հաջորդը: Դա Կաստրոյի վարչակարգը տապալելու միջոց էր՝ առանց բացահայտելու ԱՄՆ-ի մասնակցությունը գործողությանը: Ինչևէ, գործողությունն արագ վերաճեց լայնածավալ ներխուժման ծրագրի, որի բյուջեն հասավ 46 միլիոնի: ԿՀՎ-ն պետք է վերապատրաստեր և Գվատեմալա ուղարկեր ընդդիմադիր կուբացի վտարանդիներին:

Ապրիլի 15-ին, ներխուժումից մի քանի օր առաջ, ԿՀՎ-ի օդաչուները մասամբ ոչնչացրին Կաստրոյի օդային ուժերը: Նրանք պատրաստվում էին գործն ավարտին հասցնել հաջորդ օրը, երբ Քենեդին անհայտ պատճառներով հրաման տվեց դադարեցնել օդային հարվածները: Ապրիլի 17-ին մոտ 1500 վտարանդիներ ցամաք իջան Կուբայի հարավում գտնվող Խոզերի ծովածոցում: Հույս ունենալով ստանալ տեղական բնակչության աջակցությունը, նրանք մտադիր էին հասնել Հավանա, բայց նրանց կանգնեցրեց Կաստրոյի բանակը: Մինչև ապրիլի 19-ին կռիվների դադարելը, հարյուր հոգի սպանվեց, իսկ մնացածները գերեվարվեցին: Հետագայում Կուբայի կառավարությունը փրկագնի դիմաց ազատեց գերված վտարանդիներին:

ԿՀՎ-ի անցկացրած ներքին գաղտնի վերստուգումը պարզեց, որ գործողությունը ծրագրելիս և իրագործելիս սխալներ

էին թույլ տրվել: Վերստուգման արդյունքները հրապարակվեցին 1998 թ.-ին: Փաստորեն, լուրերի արտահոսք էր եղել, և Կաստրոն պատրաստվել էր հակահարվածի: Կղզում չկար նաև Կաստրոյի վարչակարգի դեմ կազմակերպված դիմադրություն, որը կօգներ ներխուժողներին: ԿՀՎ-ն ապակողմնորոշել էր Քենեդիին: Կուբացի ժողովուրդը չաջակցեց զավթիչներին:



DISCUSSION PRACTICE

1. Could Kennedy establish good relations with the USSR?
2. How did the world community respond to the Cuban crisis?
3. How did Cuba and the USSR cooperate?
4. Do you think Khrushchev was a strong leader?

**GETTING STARTED**

You're going to listen to a talk about peace and war. Tick (✓) the topics that you think will be discussed.

1. ____ The consequences of World War II
2. ____ The Peace Corps and its mission
3. ____ The Peace Corps activities in the South Caucasus
4. ____ Kennedy's talk about the dangers of nuclear war
5. ____ Kennedy's talk about terrorism in the world
6. ____ The problem of Vietnam
7. ____ The US support for the South Vietnamese government
8. ____ The US government's improved relations with North Vietnamese communists
9. ____ The US and the USSR nuclear tests
10. ____ The USSR as the first country to stop nuclear tests



LISTENING PRACTICE

A. Listening for main ideas

Listen to a talk about peace and war. Mark each of the statements as T (true), F (false) or NG (not given) in the talk. Correct the false statements.

1. ____ Since 1961 thousands of young Americans have joined the Peace Corps.
2. ____ Both Republicans and Democrats established a fund for the Peace Corps.
3. ____ South Vietnam was a Communist country, but North Vietnam was not.
4. ____ North Vietnam had a strong army and it controlled many villages in South Vietnam.
5. ____ The two superpowers finally agreed to stop testing their nuclear weapons.

B. Listening for details

Listen to the talk again and take notes. Then answer the questions below.

1. What was Kennedy's attitude to war?
2. How did Kennedy help establish world peace?
3. What do the volunteers of the Peace Corps do?
4. What famous speech did Kennedy deliver in June 1963?

5. Why did the American government interfere in Vietnamese affairs?
6. How did the American government support South Vietnam's leader?
7. Did the Vietnamese people support the policy of South Vietnam's leader?
8. What did the army officers of South Vietnam plan to do?
9. How did the US and the USSR show their power to each other?
10. When did the relationships between the two superpowers improve?



VOCABULARY PRACTICE

Match the words from the recording with the definitions.

- | | |
|-------------|--|
| 1. peace | a) to use or try sth to find out how well it works |
| 2. advisor | b) connected with the armed forces |
| 3. military | c) a person who knows a lot about a particular subject |
| 4. join | d) a period of time in which there is no war or violence |
| 5. danger | e) an object used for fighting or attacking |

- | | |
|---------------|--|
| 6. government | f) become a member of an organisation |
| 7. test | g) the group of people who are responsible for controlling a country |
| 8. weapon | h) the possibility of harm, death or damage |



TRANSLATION PRACTICE

A. Translate the following sentences into English.

1. Ջոն Քենեդին հիմնեց Խաղաղության կորպուսը՝ օգնելու համար ազգերին ապրել խաղաղ և համերաշխ:
2. Խաղաղության կորպուսի կամավորներն ապրում են այլ երկրներում՝ ուսումնասիրելով նրանց մշակույթն ու կենսակերպը:
3. Իր հայտնի ելույթում Քենեդին խոսեց միջուկային պատերազմի վտանգների մասին:
4. Հարավային Վիետնամի կառավարության առաջնորդը կաթոլիկ քաղաքական գործիչ էր:
5. Հյուսիսային Վիետնամը, որն ուներ կոմունիստական վարչակարգ, ցանկանում էր վերահսկել հարավային Վիետնամը և տարածել իր ազդեցությունը հարավարևելյան Ասիայում:

B. Render the following text in English. Use the glossary on pp. 99-100.

Նգո Դիին Դիեմը Հարավային Վիետնամի առաջին նախագահն էր: Նրա ընտանիքը կաթոլիկ էր, և նա կրթություն ստացավ ֆրանսիական դպրոցում: 1933 թ. նա Բաո Դայ կայսեր կողմից նշանակվեց ներքին գործերի նախարար: Դիեմն ատում էր ֆրանսիացիներին, չէր հանդուրժում նրանց ներկայությունը իր երկրում և դեմ էր նրանց հետ համագործակցելուն: Նա հրապարակավ խզեց կապերը Բաո Դայի հետ, հեռացավ կառավարությունից՝ արժանանալով վիետնամական ազգայնականների հավանությանը:

